



Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ

Իրականացման 01.02.2023 - 31.01.2026
Ժամանակահատված:

ԱԼԳ երկրներ:
Armenia

ԵՄ ներդրում: € 1 500 000

Ընդհանուր € 1 667 593
բյուջե:

Իրականացնող կազմակերպություն(ներ):
People in Need



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ: armenia.peopleinneed.net/hy/

Նախագծի նկարագրություն:

Սյունիքում կայուն սոցիալական ծառայությունների համակարգ զարգացնելու, ուժեղացված սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ծրագիրը աջակցելու է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը՝ ոլորտային բարեփոխումներ իրականացնելու գործընթացում: Ծրագիրը կնպաստի համայնքապետարանների կողմից ժամանակավոր դրամական օգնության սոցիալական ծառայությունների համակարգից անցմանը դեպի ավելի համակարգված և ավելի դիմակայուն ինտեգրված համակարգին, որը կհանգեցնի համայնքային սոցիալական ծառայությունների կայուն ֆինանսավորմանը եւ ավելի լավ կծառայի մարզի ամենախոցելի բնակչության կարիքներին՝ նպաստելով աղքատության, անհավասարության և խոցելիության մակարդակի նվազմանը: Ծրագիրը միտված է նաև բարձրացնելու քաղիասարակությունների (ՔՀԿ) դերը՝ որպես հիմնական դերակատարների:

Ակնկալվող արդյունքներ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեն հմտություններ, կազմակերպչական կառավարման պրակտիկա և կայուն բիզնես մոդելներ՝ բարձրորակ, արձագանքող համայնքային սոցիալական ծառայություններ մատուցելու համար.

- Թիրախային ՔՀԿ-ների կարողությունների զարգացում՝ կենտրոնանալով տեխնիկական սոցիալական ծառայությունների մատուցման, համայնքի իրավիճակի վերլուծության, դրամահավաքի, ցանցերի և կայուն բիզնես մոդելների վրա.
- Տեխնիկական աջակցություն սոցիալական ծառայությունների հավատարմագրման գործընթացով ՔՀԿ-ներին՝ ֆինանսավորման աղբյուրները դիվերսիֆիկացնելու և սոցիալական ծառայությունների մատուցման ստանդարտացման համար.

ՔՀԿ-ների կողմից համայնքահեն սոցիալական ծառայությունների մատուցման և ֆինանսավորման նոր մոդելների փորձարկում, ներառյալ նորարարական պետական-մասնավոր համագործակցությունը. ՔՀԿ-ների համար FSTP սխեման և տեխնիկական աջակցություն:
- ՔՀԿ-ները և տեղական իշխանությունները համատեղ մշակում են կայուն մեխանիզմ համայնքային սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորման և մատուցման համար՝ համաձայն Աշխատանքի